

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՁՆ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆ



ՇՄԱՐԻՏ ուրախութեամբ մ'է՛ որ կը գտնուիմ այսօր Միլանի մեր գաղութին մէջ, որոյ հանդէպ դուք լաւ գիտէք՝ որքան ջերմ են զգացումներս: Եւ այս համախմբութիւնը կը յիշեցնէ ինձ մեր այն յաճախակի գումարումները՝ զոր ունէինք երբեք ի միասին, ազգային մտերիմ շրջանակի մը մէջ վերակոչելով մեր ցեղին հին յիշատակարանները, առաքինութիւնքը, և ապրելով եղբայրական անկեղծ սիրոյ միութեան մը մէջ: Մեր անցելոյն յիշատակներէն մին է դարձեալ՝ որ կը խմբէ զմեզ այսօր իրարու քով. և ոչ թէ լոկ մին, այլ ամենէն շողողունը, Ժեղարդարձն Աստուածաշնչի հայացման, զոր իրաւամբ տարի մ'ամբողջ տօնախմբեց մեր ազգը, իմաստուն և գովելի կարգադրութեամբ Խորէն Ա. վեհ. կաթողիկոսին, որուն թող հասնին մեր երախտագիտական զգացումները: Եւ այդ դարադարձին վերջին երգը հրաւիրուած եմ հնչեցնելու այսօր ձեզ հետ: Ծնորհակալ եմ ձեր կոչին, և կը խնդրեմ ձեր յօժարամիտ ունկնդրութիւնն իմ տկար ձայնիս:

1. — Սուրբ Գիրքը: — Ինքն իւրմէ և եկեղեցւոյ հին վարդապետներէն պէսպէս յորջորջումներ ընդունած է ամենուն պաշտելի այդ մատենան: Կոչուած է Գիրք՝ կամ Գիրք՝, իբրեւ գերագոյնը գրոց մէջ՝ որոյ առջեւ բոլոր միւսերը կը չքանան. մերթ առնելով իւր վրայ նա և աստուածաշունչը՝, աստուածային՝ կամ սուրբ՝ տիտղոսներն ալ: Կոչուած է և Կտակարանը՝, իբր ընդունարան Աստուծոյ ընդ մարդկան կնքած ուխտին. և Աւետարան՝ իւր նոր

մասին մէջ, ուր կը բովանդակուի մարդկային փրկութեան աւետիքը: Անուններ՝ ասոնք բոլորը, որոց մէջ կը խտանայ մատենին ամբողջ էութիւնն ու մեծութիւնը:

Աստուածատուր պատգամն է, հնչուած Սինայի ամպախիտ փայլակնացայտ որոտընդոտ կատարէն՝ մինչեւ Բեթղեհեմի անշուք և հեզիկ մսուրը: Հօն՝ կը գոչէր սարսափի անտես Աստուածը, հօս՝ կը մնչէ սիրոյ շօշափելի Աստուածը: Հօն կը բացուի փրկութեան ճանապարհն իսրայելի ժողովրդեան առջեւ, և հօս՝ բոլոր մարդկութեան. և որուն համար Աղամայ գարմը կընար երախտագէտ հոգւով ըսել առ Աստուած՝ Թագապաակ մարգարէին բեւրանով. «Ճրագ է բան քո ոտից իմոց, և լոյս տայ շաւղաց իմոց»¹: Արդարեւ աստուածային օրինաց, ճշմարտութեան, սիրոյ, ներողութեան և ժուժկալութեան այդ մատենն է՝ որ կոչուած էր յեղաշրջելու տիեզերքը, մաքրելու յունահոռմէական մեծապանծ քաղաքակրթութիւնն իւր անոտի պաշտամունքէն և ամօթալից արատներէն, և ձուլելու քրիստոնէական քաղաքակրթութեան նրբութեանը մէջ:

2. — Ս. Գիրքն ի Հայս օտար լեզուներով: — Հայաստան ալ, որ իւր ի քրիստոնէութիւն դարձէն ի վեր հարիւր տարի դարձուցած աչքերն այդ ճրագին, հազիւ կը նշմարէր զայն՝ որ շատ հեռի էր իւրմէ, և չէր կարող ընդունիլ անոր կենսատու ճառագայթները, ունեցաւ վերջապէս բախտը՝ զայն բարձրացած ու ջահացած տեսնելու Մասեաց վեհ կատարին վրայ, և վայելելու անոր ամբողջ պայ-

ծառութիւնը: Այս մեծ պատահարն է՝ զոր մեր եկած ենք տօնախմբելու հօս մեր ազգին հետ:

Ամբողջ դար մ'էր անցած այն օրէն՝ ուր անիծեալն Անակայ օրհնեալ ծնունդը կու գար դարմանել իւր հօր ոճիրը, մեր արքունեաց և աշխարհին վրայ անոր թողած սգոյ խաւարը փոխանակելով Աւետարանին լուսով: Ամբողջ դարէ մ'ի վեր կը հնչէ հայ բեմէն փրկարար աւետիքը, բայց բարբառներով՝ որ անմատչելի են հայ ականջին: Նախ յունարէնը, յորում բացած էր Գրիգոր իւր լեզուն Կեսարիոյ մէջ, և զոր ինքն ու յաջորդներն հարկադրուած էին հնչեցնել նա եւ հայ լսելեաց՝ առ ի չգոյէ տոհմային զրին, առանց յաջողելու զգացնել մեր ազգին՝ այդ աւետեաց ամբողջ հմայքը:

Անցան երկար տարիներ. եկաւ Մերուժան ուրացող ու մատնիչ հայրենեաց, որ օգտուելով Արշակայ նենգաւոր գերութենէն, սկսաւ աւերել հայ եկեղեցիները¹, և ջարդ մը տուաւ յունախօսիկ սրբազան մատենաներու²: Եւ երբ մեր աշխարհը բաժնուեցաւ երկուքի՝ Խոսրովու և Գ. Արշակայ միջեւ, ընդ գերիշխանութեամբ Պարսից և Յունաց³, պարսկական հակառակութիւնն Յունաց դէմ՝ բոլորովին ջնջեց յունարէնը պարսկական կամ մեծ Հայաստանէն, և անոր տեղ հրամայեց գործածել իւր հպատակ Ասորոց լեզուն մեր պաշտամանց մէջ⁴: Մէկ ժայռին տեղ ուրիշ մը կանգնեցաւ հայ մտքին առջեւ, որոյ համար մեր պատանեկութիւնն ստիպուած էր երթալ տարիներ մաշեցնել ասորական դպրոցաց մէջ. և այդ բոլոր աշխատութենէն վերջ՝ «ոչ ինչ էին կարող լսել և օգտել ժողովուրդն այսպիսի մեծ աշխարհի՝ յանլրութենէ լեզուին Ասորոց», կ'ըսէ Ղազար փարպեցին⁵:

Այդ երեւոյթը կ'այրէ սիրտը հոգեւէր ու ազգասէր վանականի մը, որ Հայաստանի մէջ կենաց բանին սերմը ցանկու-

պաշտօնն ստանձնած էր: Իւր մատաղ տարիներուն մէջ շնչեր էր մեծին Ներսիսի հրեղէն շունչը⁶: Եւ յետ անոր հանգստեան՝ հրապուրուեր էր պահ մ'աշխարհի փայլէն, և զգեցեր իւր վրայ զինուորական շողողուն համազգեստը, մտեր արքունական զիւանդին մէջ, և «ցանկալի եղեալ զինուորական արուեստին իւրոց զօրականացն»: Ապա զօրացեր էր իւր մէջ Ներսիսի ծածուկ ձայնը, և գնացեր մտեր անապատի հոգեւոր զինուորութեան մէջ, և տուեր ինքզինքը սաստիկ խստամբերութեան մը. և իրեն շուրջ հաւաքեր ու կըրթեր էր իւր հոգւով՝ աշակերտաց ընտրեալ խումբ մը, նմանութեամբ երկնաւոր Վարդապետին: Եւ վառուած աստուածային նախանձով, կը շրջէր մաքրել Հայաստանն հեթանոսութեան մնացորդներէն, շարունակելով մեծին Ներսիսի գործը⁷:

3. — Մեսրոպ կը հայացնէ ա. Գիրքը: — Վարդապետը տեսաւ և զգաց՝ որ իւր անհատական ճիգերը շատ հեռի կը պահէին զինքը նպատակէն. փոխանակ Աւետարանի ջահէն փրծուած կայծերու՝ հարկ էր նոյն ինքն լուսոյ աղբիւրը տալ հայ ազգին ձեռքը. պէտք էր հայացնել Աստուածաշունչը, ուրիշ հնարք չկար. և առ այդ՝ կարեւոր էր ստեղծել նախ հայերէն այբուբեն մը: Երկու տարի չարձարուեցաւ այդ զիւտին ետեւէն: Յայտնուեցաւ հայերէն գրերու հին փորձ մը՝ 21 յոյն տառերով, որոնք մեր առողջանութեան համար անբաւական լինելով, մէկ կողմ ձգուած էին: Ինքն ալ զգաց այդ անբաւականութիւնը. ուղեւորութիւններ կատարեց Հայաստանէն դուրս. խորհրդակցութիւններ օտար մասնագիտաց հետ: Եւ հուսկ ապաւինած իւր նուրբ լսողութեան, ըննեց ճշդեց հայ հնչմանց բոլոր զանազանութիւնները, կերտեց 15 նոր գրեր նախորդաց վրայ, և տուաւ իւր ազգին աշխարհի կատարելագոյն այբուբենը⁸: Շահած էր յաղթանակը՝ մեր անցած դարեւ-

1. Մրկ. Ժե, 28. 35. Բ, 22. Հոմ. Գ, 3. Վեցոր. 1. Մրկ. 160. 35. Բ, 131. — 2. Մրթ. ԻԱ, 42. Ղ. ԻԳ, 32, 45. — 3. Բ ՏԻ. Գ, 16. — 4. 35. Բ, 105.

40. — 5. Բ ՏԻ. Գ, 15. — 6. Բ Կոր. Գ, 6, 14. — 7. Մրթ. Գ, 23. Մրկ. Ա, 1 եւ. — 8. Սղմ. 20. 105.

1. Փաւս. Գ, 20. — 2. Խորեն. Գ, 19, 27. — 3. Փաւս. 2, ա. — 4. Խորեն. Գ, 27. — 5. Տպ. 1873, 35-36. —

6. Խորեն. Գ, 16. — 7. Կորեն, 1833, 6-7. Խորեն. Գ, 16. — 8. Ուղղոր. եւ առոգ. հյր. 49-63.



Հայկական Գրչագիրք


Մատենադարան Ս. Ղազարու.

ԱՅԼԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ ՏԵԱՈՆ

12. — Աւետարան Տրապիզոնի. թ. 1490, ժժ Դար

LA TRANSFIGURATION DE N. S.

Tétraévangile de Trébizonde. N. 1490, du XIIe Siècle



Հայկական Գրչագիրք

Մատենադարան Ս. Ղազարու.

13. — ԽՈՐԱՆ Աւետարանին Տրապիզոնի. թ. 1490, ժժ Դար

CANONS DE CONCORDANCE

Tétraévangile de Trébizonde. N. 1490, du XIIe Siècle

րու անտարբերութեան դէմ, և ձգած կա-
մուրջն՝ աստուածային պատգամին ու հայ
լեզուն միջեւ: Այս կը լինէր Ասորոց
Սամուսատ քաղաքին մէջ, ուր կը գտնուէր
ինքն աշակերտներով:

Փառք տուաւ երկնից. իսկոյն բաժնեց
Աստուածաշունչն իրեն և երկու երիցա-
գոյն քաջ աշակերտաց՝ Յոհան եկեղեցա-
ցւոյ և Յովսէփ պաղնացւոյ միջեւ, ու
սկսան հրատապ աշխատութեամբ մը
թարգմանել, ծայր տալով Առակաց գրքէն,
որ կենաց խրատը պիտի լինէր հայ երի-
տասարդութեան: Եւ հօն զարմանալի ա-
րագութեամբ մը հին կտակարանի 22
յայտնի կամ նախականոն գրքերը, և
ամբողջ Նոր կտակարանը՝ միանգամայն
«հայաբարբառք հայերենախօսք գտան»,
կ'ըսեն իւր աշակերտներն հիացմամբ¹:

Ո՛վ կրնայ երեւակայել Վարդապետին
ցնծութիւնն՝ երբ դարձաւ հասաւ Վաղար-
շապատու սահմանները, աստուածային
գանձուն դէզը տիտանեան ուսերուն վրայ:
Իրաւամբ կը դիտէ կորիւն՝ թէ Մովսէս այն-
չափ չէր զուարճացած՝ Սինայէն իջնելու
ժամանակ, որ պիտի գտնէր իւր առջեւ ու-
կեղէն հորթին երկրպագող ապերախտ ժո-
ղովուրդ մը, ինչպէս մերս Մովսէս՝ որ
տեսաւ իրեն ընդ առաջ ընթացած ս. Սա-
հակ հայրապետը, թագաւորը, նախարա-
րաց ամբոխը, ողջագուրելու զինքն ու
շնորհակալ լինելու՝ ազգիս իւր ըրած մեծ
բարերարութեան համար, որով «երանելի
և ցանկալի աշխարհս Հայոց անպայման
սքանչելի» պիտի լինէր²: Եւ հրճուանաց
ձայներով, հոգեւոր երգերով և օրհնու-
թեամբ զինքը տարին ոստանը, և օրերով
տօնախմբեցին այդ մեծ պարգեւը³, որով
«որպէս ի խաւարէ՝ յասորի տանջանացն
զերծեալք ի լոյս՝ խնդային», ըստ գեղե-
ցիկ բացատրութեան Փարպեցւոյն⁴:

4. — Հայ քարգմանորեան աղբիւրը: —
Այդ դարուն արեւելեան եկեղեցւոյ մէջ
ծանօթ էին ս. Գրոց երկու թարգմանու-

թիւնք. Եօթանասնից կոչուածն և ասո-
րականը: Առաջինն՝ ըստ աւանդութեան
կատարուեր էր նախաձեռնութեամբ Եզրիպ-
տոսի Պտղոմէոս Եղբայրասէր՝ և միանգա-
մայն ուսումնասէր թագաւորին (Գ. դարուն
ն. Ք.), որ փափաքելով իւր հիմնած մա-
տենադարանին մէջ ունենալ նա և հրէա-
կան օրինագիրքը, Պաղեստինէն 72 զի-
տուններ կոչած և յունարենի թարգմանել
տուած էր զայն: Արդի ընդադատութիւնը
չի ընդունիր տեղեկութեանս վաւերակա-
նութիւնը. բայց Աստուածաշնչի հելլենա-
ցումն հին էր նոյն չափով, և գերիշխող
բերայականին վրայ. ըստ որում ս. Գրոց
հնագոյն վիճակը կը ներկայացնէր, ինքն
էր գործածուեր նոր կտակարանի մէջ ալ,
և աւելի հասկանալի էր յոյն լեզուով՝ որով
զրուած էր նոր կտակարանն ինքնին: Այս
պատճառաւ արեւելեան ս. Հարք եւս անոր
փարեցան⁵: Գալով ասորական թարգմա-
նութեան, կատարուեր էր յետ քրիստո-
նէութեան՝ երրայական բնագրէն, և չունէր
եօթանասնականին յարգը⁶: Կը գործա-
ծուէր պարսկական շրջանակի մէջ, և մեզ
ալ յատուկ էր, ինչպէս ըսինք:

2. Եւ յիշուած՝ թէ Մեսրոպեանք այդ կրկի-
նակ թարգմանութիւններէն ո՞րը հայացու-
ցին: Բայց Խորենացին վկայելով՝ թէ ս.
Սահակ իւր միւս թարգմանութիւնը կա-
տարեց «յասորոյն՝ յոչ լինելոյ յունի⁷»,
գուշակել կու տայ՝ թէ նոյնպէս վարուե-
ցաւ և Մեսրոպ՝ հիւրընկալ ասորական
քաղաքին մէջ: Արդարեւ ասոր թարգմա-
նութենէն ունինք ազատած նշխար մը, Ա.
Մնացորդաց գրքէն, զոր հրատարակեց Գր.
Խալաթեանց: Համեմատութիւն մ'ասորի
բնագրին հետ՝ զոր ըրի, ցոյց տուաւ ինձ
այդ նշխարին սերտ աղերսն անոր հետ:

5. — Սահակ վերադառնալէ կը քարգմանէ: —
Սակայն մեսրոպեան թարգմանութիւնը
չգոհացուց մեր եկեղեցական դասը, որոնք
զաղափառով կապուած էին միշտ Եօթա-
նասնից պանծացեալ բնագրին հետ. մա-

1. Կորիւն՝ 12-13. Խորեն. Գ, ձգ. — 2. Կոր.
12. — 3. Նոյն՝ 10-11. — 4. Փրպ. 43. — 5. Հմմտ.

Vigouroux, D. d. l. B. V, 1623 եւն. — 6. Նոյն՝
1916 եւն. — 7. Խորեն. Գ, ձգ.

նաւանդ գս. Սահակ, որ իւր հարց պէս
ստացած էր հելլենական դաստիարակու-
թիւնը, քաջ հմուտ անոնց լեզուին և ե-
րաժշտական տառերուն անգամ¹: Եւ ինքն
իսկ՝ ըստ խնդրանաց Մեսրոպայ,
արքային և իշխանաց՝ հետա-
մուտ եղաւ, գտաւ յոյն բնագի-
րը, և կատարեց նոր թարգմա-
նութիւն մը²: Բայց դժգոհ էր և
ինք իւր ափ յափոյ գտած ու
գործածած օրինակէն, որ հաւա-
տարմութեան երաշխաւորութիւն
չէր տար:

Եկաւ օր մը՝ ուր յունական
ուսմանց սէրը քաջեց տարաւ
Մեսրոպայ աշակերտները դէպ ի
Յունաց կողմերը, ուր զօրացու-
ցին իրենց գիտութիւնը. և դար-
ձան «հաստատուն օրինակօք
աստուածատուր գրոցն» ըստ
յունական բնագրին, ինչպէս
յանձնարարուած էր իրենց. և
ս. Սահակ, որ՝ ինչպէս ըսինք՝
«զեկեղեցական (կամ եկեղեցւոյ
ընդունած աստուածաշնչական)
գրոց գումարութիւնն՝ կանխաւ
յունական բարբառոյն ի հայե-
րէն դարձուցեալ» էր, այդ հապ-
ճեպ «զփութանակի զթարգմա-
նութիւնս հաստատէր ճշմարիտ
օրինակօք բերելովը», իրեն գոր-
ծակից առնելով աշակերտներէն՝
հայերենի և միանգամայն յու-
նարենի մէջ անմիջեղին Եզնիկ
կողբացի³: Այս գործն է՝ զոր և
Խորենացին կը սահմանէ՝ «վե-
րջստին յօրինել նորոգմամբ⁴»:
Միայն թէ անոր մէջ շատ ա-
նուններ յունականաց քով կը
մնան ասորական հնչմամբ, որով յառա-
ջագոյն լցուած էին թարգմանչաց ա-
կանջները:

Այս նոր կոթողը տակաւ մոռացութեան
ու կորստեան դատապարտեց Մեսրոպայ

թարգմանութիւնը, այլ առանց կապտելու
մեծ Վարդապետէն՝ ս. Գրոց հայացման
զաղափարին և առաջնութեան պարծան-
քը: Ակնարկեցինք վերեւ անոր թարգմա-



Հայկական Գրչագիրք
Մանդրն. Ս. Ղազարու
ՍԿԻՉԻՆ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ ՄԱՐԿՈՍԻ
14. — Աւտարամ հաւովթառի. թ. 151, ամ գրչութեամ 1214
DEBUT DE L'EV. DE St. MARC
Tetraevangile de Havouthar, N. 151, an 1214

նութեան մէկ մնացորդին դեռ մինչեւ ցայ-
սօր՝ Լժմիածնի մատենադարանին մէջ:
Քան զամէնը բախտաւոր եղան Դաւթի
սաղմոսները, որ միանգամայն հոգեւոր
երգեր էին. և որոնք հազիւ հայացած

1. Փրպ. 42. — 2. Նոյն՝ 43, 46. — 3. Կոր.
21. — 4. Խորեն. Գ, կա.
ԲԱՋՄԱՎԷՊ - ՍԵՊՏԵՄԲԵՐ - ԴԵԿՏԵՄԲԵՐ 1935

վարդապետէն, փոխադրուեցան հայ ժողովրդեան շրթանց վրայ, և հօն ալ մնացին միշտ. զի սահակեանը չկարողացաւ ջնջել զանոնք. վարժութիւնն աւելի զօրաւոր հանդիսացաւ: Փարպեցիին խնամով կը յիշատակէ երկու թարգմանութեանց մէկ տարբերութիւնը՝ ժ. 2 սաղմոսին մէջ. «Յագեցան կերակրօք, ասէ, որ միւս ևս թարգմանիչ խոգեկեալ ասէ՝»: Թ. Ուրծուին կը վերկայէ՝ թէ Սասնեցիք «գիտեն զսաղմոսն գիւն րարգմանեալն վարդապետացն Հայոց, զոր հանապազ ի բերան ունին»²: Յհ. Օձնեցին, Դեռնդ պատմիչ ու Գր. Նարեկացին³ կոչուեցան ունին սաղմոսաց հին թարգմանութենէն, և նոյն է՝ որ կը մնայ ցարդ եկեղեցական պաշտամանց մէջ ալ, մինչ սահակեանը կը պահուի ս. Գրոց և կամ իրենց ի թիւ պաշտուած մասանց մէջ:

6. — Հայ րարգմանութեան կարեւորութիւնը: — Այս կէտը նկատելի է ըստ բազում գլխոց: Նախ՝ իւր պատկանելի հնութեամբ, որով կ'ենէ մինչեւ ցեղար: Երկրորդ այնու՝ որ կատարուած լինելով յունարենի «ճշմարիտ օրինակօք», կը ներկայացնէ ս. Գրոց բնագրին լաւագոյն վիճակն՝ որ կար նոյն դարուն: Երրորդ՝ թարգմանութեան հաւատարմութեամբ և ընտրութեամբ, որոյ վրայ պիտի ծանրանամ առաւելապէս:

Ո՛վ տեսար, մեր արդի իմացման մէջ դիւրին բառ մ'է րարգմանելը: Բայց գիտէ՞ք՝ որքան ծանր ու հսկայ գործ մ'էր Աստուածաշնչի հայացումը: Երեւակայեցէք միայն ս. Գրոց քանակը, որ այժմեան մանր տպագրութեամբ արդէն ստուար հատոր մ'է, զորում հին խոշոր երկաթագրով, և դուք պիտի տեսնէք մեր թարգմանչաց առջեւ բլրացած կոյտ մը մագաղաթեայ հատորներու, որոց բաժնուած էր հին ժամանակ ս. Գիրքը, դիւրաւ գործածելու համար. այնպէս որ սովորութիւն էր մատենադարանէն խնդրել զանոնք այսպէս. «ՉԱռաքեալդ տո՛ւր, կամ զԵսայիդ,

կամ զԵրեմիայ», ինչպէս կ'ըսէ վրթանէս Երթող՝ 2 դարուն⁴:

Բայց այդ դեռ ոչինչ է: Այս մատենը չէր նմաներ ուրիշ գրքերու. ասոր հեղինակ՝ ինքն Աստուած էր: Նա թելադրեց ու գրել տուաւ Մովսիսի իւր օրէնքը, սքանչելիքները, կամքն ու հրամանները⁵: Նոյն ինքն ներշնչեց մարգարէից անոնց գրքերն՝ ըստ իրենց վկայութեան, և հաստատութեան Պետրոսի՝ թէ «ի Հոգւոյն սրբոյ կրեալը՝ խօսեցան մարդիկ յԱստուծոյ»⁶. և Փրկիչը վկայեց իւր աշակերտաց. «Ոչ եթէ դուք իցէք որ խօսիցիք, այլ Հոգին Հօր ձերոյ խօսիցի ի ձեզ»⁷: Միանգամայն եկեղեցւոյ հարց սովորական համոզումն էր՝ թէ ս. Գրոց իւրաքանչիւր բառին ու վանկին մէջ կար աստուածային ներշնչումը: Հետեւեալ անհրաժեշտ էր բացարձակ հաւատարմութիւն մ'անոր թարգմանութեան մէջ, ոչ միայն իմաստից՝ այլ և բառերու և վանկերու անգամ:

Հօգ երկու վտանգներ կը ներկայանային. հարկ էր կամ բոլորովին հեռանալ բնագրէն, թարգմանող լեզուին բնիկ նկարագիրը պահելու համար, կամ բառացի հետեւիլ բնագրին, և տուժել թարգմանող լեզուին հարազատութիւնը: Լատինէլէնը (հերոնիմեան թարգմանութեան մէջ) և բոլոր նոր բարբառներն ստիպուեցան չափով մը հեռանալ բնագրին բառացի հետեւողութենէն, ի վնաս թէ բնագրին և թէ իրենց լեզուին: Իսկ հայերէնը՝ Մեր լեզուն՝ որ կը գտնուէր հօգ իւր ոսկեղէն փայլին մէջ ու կատարելութեան գերագոյն գագաթը, ինչպէս գիտէք, միանգամայն ի վիճակի էր սքանչելի կերպով հետեւելու հելլէն բարբառին բոլոր ճկնութեանց ու զարդերուն, առանց անշուշտ հաւասարելու անոր հետ: Եւ ս. Գիրքն ընկաւ՝ — անհրաժեշտ պայման մ'էր և այս՝ — ճշմարիտ արուեստագէտ ձեռքերու մէջ, որ բացարձակ խղճմտութեամբ անփոփոխ պահեցին հայերենի մէջ՝ բնագրին նախա-

դասութեանց կազմը, բառերու շարակարգութիւնն՝ ուր հնարաւոր էր, բանից դարձուածները, և մինչև իսկ բառերու բարդ ձեւերը, ասոր հետ ուշ դնելով՝ որ հայերէնը չկորսնցնէր բնաւ իւր բնորոշ գեղեցկութիւնը: Հօս է մեր թարգմանչաց անման ճարտարութիւնը, և հօս՝ մեր թարգմանութեան ամբողջ մեծութիւնն ու փառքը, որ իրեն շահեցուց գրական աշխարհի մէջ՝ րազմէի րարգմանութեանց տիպոսը: Չկայ ուրիշ թարգմանութիւն մը ս. Գրոց, որ կարենայ ցոյց տալ մեզ իւր լեզուին ոսկեհիւս պատմութեանը, և անոր հետ բառացի ու տառացի հաւատարմութիւնը բնագրին:

Տասնութինգ դարերու մատենագրութիւն մ'էր ս. Գիրքը, իւր մէջ ամփոփելով ու ճերու մեծ զանազանութիւն մ'ըստ ժամանակաց, մատենագրաց և նիւթերու, պարզագունէն մինչև խրթնագոյնը, զորս Սահակայ ու Եղեկայ գրիչները գիտցան թարգմանել սքանչելապէս իրենց հայկական երանգներով, և շատերու մէջ զլելով բնագրերը, որոնք տկար յունարենով մ'էին շարագրուած, ինչպէս նոր կտակարանը: Պատշաճ է՝ որ հօս կոչեմ մէկ երկու կարճ օրինակներ, ոճերու և լեզուի զանազանութեանց փոքր գաղափար մը տալու համար ձեզ: Աստուածաշունչը կը սկսի այսպէս. «Ի սկզբանէ արար Աստուած գերկին և գերկիր, և երկիր էր աներեւոյթ և անպատրաստ, և խաւար ի վերայ անդնդոց, և հոգի Աստուծոյ շրջէր ի վերայ ջուրց: Եւ ասաց Աստուած. Եղիցի լոյս, և եղեւ լոյս. և ետես Աստուած զլոյսն՝ զի բարի է. և մեկնեաց Աստուած ի մէջ լուսոյն և ի մէջ խաւարին. և կուտաց Աստուած զլոյսն տիւ, և զխաւարն կուտաց զիշեր: Եւ եղեւ երեկոյ, և եղեւ վաղորդայն՝ օր մի՝»: Ո՛րքան պարզութիւն այս տողերու մէջ. և վստահ եմ՝ որ բոլորդ ալ հասկացար զանոնք:

Տեսէք այժմ ձիւն չընաղ նկարագիրն Յոբայ գրքէն: «Եթէ դո՛ւ ազուցեր ձիւն զօրութիւն, և զգեցուցեր զա՛հ ընդ պարանոցս նորա. արկեր զնովաւ սպառազի-

նութիւն, և փառս լանջաց զյանդգնութիւն: Որոտայ ի դաշտի և դափր հատանէ. ելանէ ի դաշտ զօրութեամբ. ի պատահել նետից արհամարհէ, և ոչ դարձցի յերկաթոյ. ի վերայ նորա շողան աղեղն և սուսեր, և շարժին վահանի և նիզակի, և բարկութեամբ ասպականէ զերկիր: Եւ ոչ հաւատայ՝ մինչև փող հարկանիցի. և իրբեւ փող հարկանի, նա վաճ վաճ կարդայ. ի հեռաստանէ առնու զհոտ պատեւազմի, վազս առնելով և փռնչելով²»: Չեմ գիտեր՝ որ լեզուն քան զայս ճարտար կրնայ նկարագրել մարդուն ծառայող այդ ընտանի գեղեցիկ անասունը:

Երրորդ կտոր մը Սողոմոնի Իմաստութենէն, ուր կը նկարագրուի Եգիպտացւոց հոգեկան տագնապը պատիժներու ազդեցութեան ներքեւ: «Զի զօղեալ համարէին ընդ գաղտնեօք մեղաց, ընդ անճաճանչ յիմարութեան առագաստաւ ցրուեցան, անհնարինս յիմարեալք, և խուճապիւք խռովեալք: Քանզի և ոչ՝ որ ունէր զնոսա մովթն՝ աներկիւղս պահեաց. զի բոմբինք շուրջ զնոքօք պատեալ սրարբեցուցանէին, և ցնորք անժպիտք խոժոռադիմացն երեւէին: Ի դիւթական արուեստի խաբէութիւնս անկանէին, և ի խորհուրդս ամբարհաւաճութեան՝ կշտամբութիւն թշնամանալից: Զի որք խոստանային զարհաւիրս և զխոռովութիւնս հալածել յանձնէ ախտացելոց, նոքա զծաղրալից երկիւղն ախտանային: Եւ նոքա զսաստիկ զանհնարին զգիշերն և յանմատուցից մթից դժոխոցն հասելոց ի վերայ՝ զնոյն բուն ննջեցին: Քանզի միով խաւարային շղթայիւ ամենեքեան կապեցան: Եթէ հոգմ շնչէր, և եթէ ի թանձրախիտ ոստոց քաղցրածայն հաւուց բարբառ հնչէր, եթէ յօղորութիւն ջրոց հոսելոց բռնութեամբ, և եթէ բոմբինք սպառնալեաց վիմաց հոլովելոց, և եթէ ընթացք աներեւոյթք անասնոց կայտուելոց, և եթէ բարբառ ահագին զազանաց զոչելոց, կամ անդրէն յանձն բեկելոց ի քարանձաւաց լեռանց ձայնից

1. Փրպ. 115. — 2. Արծ. 135. — 3. Մեկ. երգոց երգ. — 4. Յղգ. պոկրմրոց. — 5. Եւր. Ժ. 14.

Թիւք. ԻԵ, 17-19 ևւն. — 6. Բ. Պետ. Ա, 21. — 7. Մատ. Ժ, 20.

1. Մենդ. Ա, 1-5. — 2. Յոր. 1, 19.

արձագանգաց, լքոյց զնոսա զարհուրե-
ցուցեալ¹»։ Այլ չեմ խօսիր. զի հայերե-
նի վեհութեան տպաւորութիւնը կը նըշ-
մարեմ զըրոշմուած ձեր դէմքերուն վրայ։



Հայկական Գրչագիրք

Մտնդրն. Ս. Ղազարու.

ՍԿԻՋԵՆ ԱԻԵՏԱՐԱՆԻՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ

15. — Աւետարանի ձաւութաւորի. թ. 151, ամ գրչ. 1214

DEBUT DE L'EV. DE St. JEAN
Tetraevangile de Havouthar, N. 151, an 1214

7. — Ս. Գրոց դերն ի Հայս։ — Սա-
կայն, տեարք իմ, այս գրական ու տե-
սական գեղեցկութիւններէն աւելի մեծ ու
կարեւոր բան մը կայ նկատելի մեր Աս-
տուածաշնչի թարգմանութեան մէջ. անոր
անգուգական դերը մեր ցեղին բարոյա-

կան ու քաղաքակրթական բարձրացման՝
և — ներեցէք որ աւելի յառաջ երթամ —
մեր ազգութեան պահպանութեանը մէջ։
Զայս լաւ րմբռնելու համար՝ կը հրաւի-
րեմ զձեզ թեթեւ ակնարկ մը ձգել
թարգմանութեան նախընթաց
շրջանին վրայ, որպէս զի տես-
նէք տարբերութիւնը՝ որ գոյա-
ցաւ յետոյ։

Հարկւր տարիներէ ի վեր Հա-
յաստան պաշտօնապէս և ազգո-
վին քրիստոնեայ է. բայց քրիս-
տոնէութեան մաքուր ու փայ-
լուն զրոշմը դժուարաւ կը նշմա-
րուի անոր ճակատին վրայ։ Հա-
յուն մտաց ու բարոյց մէջ տա-
կաւին իրարու կ'ընդհարին իւր
հարց և Աւետարանին կրօնքնե-
րը, յաղթութիւնն առաջնոյն վի-
ճակելով։ Տրդատայ մեծահաւատ
ու սուրբ զահուն վրայ իրարու
կը յաջորդեն խառնագնաց թա-
գաւորներ, իրենց ետեւէն քար-
շելով աւագանին ու ժողովուրդն
ալ։ Բարեպաշտ Աշխենի պսակը կը
կրէ իւր նուն, որ անպարկեշտու-
թեան անհանդուրժելի տեսարան
մը կը պարզէ։ Վրթանէս հայրա-
պետն ուղղութեան կը կոչէ զայն.
և ատոր փոխարէն՝ թագուհւոյն
զինած ամբոխ մը կ'երթայ կը
պաշարէ Աշտիշատի սրբավայրը,
սպաննելու հովուապետը՝ որ հրաշ-
քով կ'ազատի²։ Իւր որդին Տիրան
թոպամահ կ'անշնչացնէ զՅովսիկ,
որ իւր յեկեղեցի մուտքը կը խա-
փանէր՝ ոճիրներուն պատճառաւ.
նոյն վախճանը վիճակեցաւ նա
և իւր միւս յանդիմանչին՝ Դանիէլ տե-
ղապահի³։ Անոր որդին Արշակ կը սպան-
նէ իւր հայրը, կը կոտորէ նախարար-
ները, կը կողոպտէ անոնց տները, և կը
կառուցանէ Արշակաւանն՝ ապաւէն չա-
րագործաց⁴։ Իւր կինը Փառանձեմ՝ կե-

1. Իմաստ. Ժէ, 3, 4, 7, 8, 13, 17, 18. — 2.
Փաւս. Գ, 4. — 3. Նոյն՝ Գ, 4, Ժ, 4. — 4. Խորեն.

Գ, 1, Ժ. Փաւս. Գ, 4, Ժ, 4.

նաց բաժակին մէջ կը խառնէ մահու դե-
ղը, և կը ջնջէ իւր մրցակից Ողոմակին¹։
Իրենց որդին Պապ ի մանկութենէ զեղծ
կեանք մը կը վարէ. իւր մօր զէնքը ձեռք
կ'առնու ճաշի մը պահուն, և կը
խաւարեցնէ իւր յանդիմանիչն ու
Հայաստանի արեգակը Ներսէս,
կը քանդէ կ'աւերէ անոր բոլոր
մեծագործ շինարարութիւնը²։
Իւր յաջորդը Վարազդատ ան-
մտօրէն կը հրապուրուի չարա-
խօսներէ և կը խողխողէ հայրե-
նեաց փրկիչը Մուշեղ³։

Զորրորդ դարու մեր նշանաւոր
պատմիչը Փաւստոս կ'ըսէ՝ թէ
հայ ազգը (բաց ի սակաւ յու-
նագիտաց և ասորագիտաց) ըն-
դունած էր քրիստոնէութիւնը բոլ-
նի, և «իրրեւ մոլորութիւն իմն
մարդկութեան ի հարկէ»։ Աւե-
տարանին բերանացի քարոզու-
թենէն, կը յարէ, ոչ մէկ բան
չէին հասկանար. և փարած կը
մնային իրենց հեթանոսական սո-
վորութեանց, առասպելաց, ախ-
տերուն, ներքին թշնամութեանց,
մերթ զադտնի և մերթ յայտնի
շարունակելով կռապաշտութիւնն
անգամ⁴։ Քարոզչաց բերանէն
իջած թեթեւ ցօղն անբաւական
էր սրբելու մեր աշխարհէն հե-
թանոսութիւնը, որ կը կարօտէր
Աւետարանի հեղեղներուն, որոնք
պիտի հոսէին Աստուածաշունչ
զրոյց թարգմանութենէն։

8. — Ս. Գիրքը պահապան մեր
կրօնից և ազգութեան — ի՞նչ պիտի
պատահէր՝ եթէ այդ հայացումը չկատա-
րուէր։ Այն՝ ինչ որ հանդիպեցաւ մեր զրացի
միւս ազգերուն։ Շատ բարգաւաճ էր Պարս-
կաստանի քրիստոնէութիւնը, կաթողիկո-
սով ու նուիրապետութեամբ, և Գ. դարուն
«յամենայն քաղաքս աշխարհին եկեղեցի

շինեցին» արքունի պալատէն աւելի շքեղ⁵.
և Շապհոյ հալածանաց առթիւ բերաւոր
նահատակներ ալ տուին։ Բայց իրենց եկե-
ղեցական լեզուն ասորականն էր, բերուած



Հայկական Գրչագիրք

Մտնդրն. Ս. Ղազարու.

ՍԿԻՋԵՆ ԱԻԵՏԱՐԱՆԻՆ ՂՈՒԿԱՍՈՒ

16. — Աւետարանի ձաւութաւորի. թ. 325, ամ գրչ. 1230

DEBUT DE L'EV. DE St. LUC
Tetraevangile de Théodosiopolis N. 325, an 1230

իրենց ասորի քարոզիչներէն. և որովհետեւ
չունէին ս. Գիրքն իրենց լեզուով, ապրե-
ցան մինչեւ է դար, ուր դեռ կը հաշուէին
իրը 90 եպիսկոպոսական աթոռներ, ապա
խառնուեցան նեստորական Ասորոց հետ,
ու նուազեցան։ Վարդանանց օրով կային

1. Փաւս. Գ, 4. — 2. Նոյն՝ Գ, 1, Ժ, 4, Ժ, 4.
Լաւ — 3. Նոյն՝ Ե, 1. — 4. Նոյն՝ Գ, 4, Ժ, 4.

Լաւ — 5. Իզեղէ, 1893, 109.

հիւսիսային ցեղերէն Լիւիւնը, Կորդուրը, Գուլթը, Ծաւղէքը, Դարսնը, Արզնարգիւնը, «ամենեքեան հաւատացեալը ի մի կաթողիկէ առաքելական եկեղեցի», կ'ըսէ Եղիշէ¹։ Անոնք ալ չունէին ս. Գրքն իրենց լեզուներով, և շիջան։ Ասոնք ևս ապաւինած էին ինչպէս մեզ, նա և իրենց համար խորթ և անիմանալի ասորերենին, և օտարալեզու Աստուածաշունչը չկարողացաւ իշխել այդ ժողովրդոց մտքերուն վրայ, ամրապնդել ու պաշտպանել անոնց հաւատքը։ Հասաւ Կուրսանը, և անապատի սուսերամերկ մարգարէին կրօնքին մէջ ձուլեց ու կորոյս անոնց քրիստոնէութիւնն ու ազգութիւնը։ Աղուանք, նոյնպէս հաւատացեալը, և նոյնպէս շարունակած երկար դարեր, անոնք ևս սպառեցան աշխարհէս. որովհետեւ թողած իրենց «բարբարոս» բարբառն ու Մեսրոպայ տուած գիրը², հայերէնն ըրին իրենց եկեղեցական ու գրական լեզու, առանց սեպհական թարգմանութեան ս. Գրոց, և խառնուեցան մեզ հետ։

Այս պիտի լինէր վախճանը նա և մեր ազգին։ Մեր նախորդ շրջանի խառնափրնդոր քրիստոնէութիւնը չպիտի պահպանէր զմեզ. և կրօնիւք՝ գուցէ և ազգաւ՝ պիտի շաղուէինք իշխեցող հզօրագոյն ցեղերու հետ, և կամ պիտի պահէինք անգոյն և աննշան գոյութիւն մը՝ նման այժմու Պարսից, Քրդերու և Լազերու։ Աստուածաշնչի թարգմանութիւնն եղաւ ուրեմն՝ որ փրկեց մեր քրիստոնէութիւնը, քաղաքակրթութիւնն և ազգութիւնը։ Ճշմարտութիւն մը, մեծ ճշմարտութիւն մը՝ զոր երբեք մոռնալու չենք։ Եւ կոյրեր են անոնք՝ որ կը մեղադրեն զքրիստոնէութիւնն իրրեւ պատճառ մեր անցեալ քաղաքական նեղութեանց ու տկարութեան. նոյնպէս և անոնք՝ որ չեն ըմբռներ Աւետարանին կարեւորութիւնը մեր ազգին համար՝ ինչպէս անցելոյն՝ նա և ներկայիս մէջ ու միշտ։

9. — Ս. Գրոց ծառայումն և արդիւնքը։ —

Տեսէք թէ ինչպէս պատահեցաւ մեր ազգին վերածնութիւնը։ Սահակայ ս. Մեսրոպայ առաջին գործն եղաւ՝ յետ տառից գիւտին՝ դպրոցներ բանալ «ամենայն ուրեք»³. ոչ լոկ կղերին, այլ և «դպրոցք հօտին ուսմանց»⁴, որոցմով յաջողեցան ապա ընդունելի և սիրելի ընծայել անոր ս. Գրքը։ Ամենուն աչքերն առաւելագոյն չափով դարձան դէպ ի Վաղարշապատ, «ի բացեալ աղբիւրն գիտութեանն Աստուծոյ», ուր կը դիմէին գունդագունդ՝ լաւագոյնս հմտանալու համար⁵։ Թիւ ինչ կերպով կ'ուսուցանէին ս. Գրքը, փարպեցին կը պատմէ՝ թէ մեր վարդապետները զայն ամբողջապէս «երիցս և չորիցս ուսուցեալ մեզ, ի սկզբանէ մինչեւ ի կատարած գրոցն համարս պահանջէին ի մէնջ զնոյնս»⁶։

Այդ զրութեամբ՝ նոյն ժամանակի բոլոր մատաղ սերունդը, թէ ազնուական և թէ ժողովրդական դասէն, խորապէս կը ծանօթանան ու կը փարին ս. Գրոց, և զայն ձեռքէ չեն թողուր նա և իրենց աւագութեան մէջ։ Երբ 450ին Պարսիկները ձեռնարկեցին ջնջել մեր քրիստոնէութիւնը, բուն ընդդիմութեան հանդիպեցան հայ ժողովրդեան, որոնք կ'աղաղակէին. «Հայր մեր՝ զսուրբ Աւետարանն գիտեմք, և մայր՝ զառաքելական եկեղեցի կաթողիկէ», որոցմէ ոչ ոք, կ'ըսէին, կրնայ բաժնել զմեզ⁷. և այդ տազնապի օրերուն «ընթերցուածք աստուածային կտակարանացն ոչ երբեք առնուին դադարումն յամենայն ժամ», կը յարէ պատմիչը⁸։ Մամիկոնեան առիւծը «տեղեակ էր ի մանկութենէ իւրմէ սուրբ կտակարանաց»⁹. և Աւարայրի մէջ Մակարայեցոց գիրքը բռնած՝ կը կարդար զօրականին՝ խրախուսելու համար զանոնք. և Ս. Ղեւոնդ հոն կ'ըսէր անոնց՝ իւր ճառին մէջ, թէ «քան զիս տեղեկագոյնք և հմուտք էք սուրբ կտակարանացն»⁹։ Յետ ձախող պատերազմին՝ հայ ժողովրդեան բազմութիւնը փախած ապաւինած լեռնե-

1. Եղիշ. 19, 93. — 2. Կոր. 18. — 3. Նոյն՝ 9, 14. — 4. Փրպ. 47. — 5. Կոր. 13. — 6. Փրպ.

605. — 7. Եղիշ. 123. — 8. Նոյն՝ 125. — 9. Նոյն՝ 195, 203.

րու և ուրիշ տմուր վայրերու մէջ, «ընթերցուածք սուրբ գրոց կատարեալ ուրախութիւնք» էին և անոնց, կ'ըսէ պատմիչը, նոյնը կրկնելով նա և իւր «փափկասուն տիկնանց» մասին¹։ Մի թէ սուրբ գրոց վառած հուրը չէր՝ որ Աւարայրի դաշտն ալ ծածկեց մեր նահատակաց արեամբ։

Իսկ ո՞վ կրնայ թուել այն բարեպաշտօն և առաքինասէր հոգիները, թէ եկեղեցական և թէ աշխարհական դասերէն, որոնք յագեցան նոյն կենաց աղբիւրէն, և բոլոր հետագայ դարերու մէջ զարդարեցին զՀայաստան։

Ինչ ահագին տարբերութիւն, ո՞վ եղբարք, թարգմանութեան նախընթաց և հետեւորդ շրջաններու միջև. ինչ հրաշալի յեղափոխութիւն՝ այդ աստուածատուր պատգամէն՝ հայ մտքին ու սրտին մէջ։ Աստուածաշունչն հայացաւ, և Հայն աստուածաշնչացաւ։ Մեծ դարագլուխ մ'է՝ որ բացուեցաւ մեր պատմութեան մէջ, բաժնելով մեր ցեղին անցեալն ապագայէն, և տալով հայկեան զարմին ազնիւ ազգի մը դրոշմը, որ կը սահմանէ զայն զրաւելու իւր արժանաւոր տեղը հին ու նոր ընտրեալ ժողովրդոց դասուն մէջ։ Եւ դաւերուն հետ Հայաստան հետ զհետէ կոխան պիտի լինի հեթանոսաց աւերիչ սմբակներուն. և յառնելի դողդոջ ու կարճակեաց հայ գահերը չեն՝ որ պիտի ապահովեն անոր գոյութիւնը. այլ այն մեծ Գիրքը՝ զոր Մեսրոպ ու Սահակ տուին անոր, և զոր թշնամին կորզել պիտի ջանայ Հայուն զրկէն, և նա պինդ պիտի կռուի անոր. պիտի յանձնէ իւր կեանքը, բայց ոչ Գիրքը։ Եւ մեր թագաւորները, մեր իշխանները, մեր ժողովուրդն յօժարութեամբ պիտի գնեն իրենց վիզն անոր սրոյն ներքեւ, — երբ զայն վանելն անկարելի դառնայ, — մերժելով ուրացութեան սև պատմութեանը, զարմացնելով զթշնամին և ըսել տալով. «Սուրբ սպանողացն բթացան, և նոցա պարանոցքն ոչ ձանձրացան»²։ Եւ լեցնելով երկինքը, անխախտ


պիտի պահեն նա և երկրիս վրայ իրենց հաւատքը, քաղաքակրթութիւնը, տոհմային նկարագիրն ու ինքնութիւնը։ Թող յաւիտեան օրհնեալ լինի յիշատակը մեր երանաշնորհ թարգմանչաց, որ մեզ այդքան բարեաց առիթ եղան։

10. — Ս. Գիրքը պատճառ հայ գրականութեան։ — Ներեցէք ինձ, ո՞վ հայրենակիցք, խնդրոյն վրայ նայիլ ուրիշ տեսակետով մ'ալ։ Զարգացած ազգերը ս. Գրքէն զատ ունին նա և իրենց մոռաւոր բարգաւաճման բազմազան երկունքը. կ'ուզեմ ըսել զբաւոր զեղեցիկ վաստակները։ Մեր եւս ունինք ու կը պարծինք հարուստ գրականութեամբ մը, ինքնագիր ու թարգմանածոյ, և մեր հանճարներով, թէպէտ ժամանակն անոցմէ կարեւոր մաս մը ջնջած լինի։ Բայց երբ և ինչպէս գոյացան այդ գրիչը ու գրուածներ։ Մեր հեթանոսական շրջանը չունեցաւ ու չթողուց որ և է շարադրութիւն, ինչպէս կը հաստատէ Խորենացին, մերոց անուսումնասիրութեան վերագրելով զայդ³։ Դարէն լոկ երկու կամ երեք հելլենիստ գրուածներ կան մեր ազգին վերաբերեալ, հաւանօրէն յոյն գրիչներէ. և անոնք ալ փրկուեցան կորստէ՝ շնորհիւ իրենց թարգմանութեան ի հայ լեզու։ Տեսէք, անոնց յոյն բնագրերը չեն մնացած։ Որով մեր գրականութիւնը կը սկսի իսկապէս այն օրէն՝ ուր մեծ Հացեկացին հայ նշանագրերը կերտեց։

Բայց Մեսրոպ զանոնք ստեղծեց՝ ս. Գիրքը թարգմանելու նպատակաւ միայն, ինչպէս յայտնի կը վկայէ իւր աշակերտը Մովսէս, զրելով թէ վարդապետելու ժամանակ երանելին շատ նեղութիւն կը կրէր, ինք լինելով ընթերցող ու թարգմանիչ օտարալեզու Աստուածաշնչին. և ուր ինք բացակայ էր և ուրիշներ կը կարդային՝ առանց թարգմանելու, ժողովուրդն ոչ ինչ չէր հասկանար. «վասն որոյ եղ ի մոի հնարել գտանել նշանագիրս Հայոց լեզուիս»⁴. վասն որոյ, ս. Գրոց համար

1. Եղիշ. 234, 386. — 2. Նոյն՝ 110. — 3. Խորեն.

Ս. Գ. — 4. Նոյն՝ Գ. 14.



Հայկական Գրչագիրք Մանրան. Ս. Ղազարու.

«ՍՈՒՐԲ ԱՒԵՏԱՐԱՆԻՉՆ ԼՈՒԿԱ»

17. — Աւետարան Թ. 141, ԺԲ-ԺԳ ղար

L'EVANGELISTE St. LUC.

Tetraevangile, N. 141, XII-XIII Siècle


իսկ. և յետ գիւտին՝ առաջին գործն ըրաւ անոր թարգմանութիւնը։ Այս թարգմանութենէն էր՝ որ ներշնչուեցան ու ծաղկեցան մեր չքնաղ գրիչներն ալ, ընդհանրապէս եկեղեցական դասէն ու դաստիարակուած ս. Գրոց ղարոցին մէջ. հօն պատրաստուեցան մեր բանաստեղծները, բեմբասացները, մեկնիչները. հօն՝ մեր Եզնիկները, Նարեկացիները, Շնորհալիւները. ինչպէս ս. Գրոց լուսով պայծառացան առ հասարակ բոլոր քրիստոնեայ աշխարհի հանճարներն ու արուեստագետներն անգամ։ Հետեւաբար մեր այրուբներն ու ամբողջ գրականութիւնը կը պարտինք

1. Ուռհ. ՂԳ. — 2. Նոյն՝ ՂԳ, ՂԵ.

նոյնպէս Աստուածաշնչի թարգմանութեան, առանց որոյ պիտի շարունակէինք մեր մտաւոր ամբողջեան դարերը՝ զորս ապրած էինք։ Վերջապէս անով հիմնուեցաւ հայ ծէսն ալ, յօրինմամբ մեր արարողական գրոց՝ որ յաջորդեց Աստուածաշնչի թարգմանութեան։ Եւ ներեցէք ինձ յաւելուլ, առանց անոր մեր հրաշակերտ ոսկերարբառն ալ, որ մեր հին քաղաքակրթութեան ու մտաւոր բարգաւաճման հայելին է, անգիր պիտի մնար, և Ե զարուն հետ պիտի խորասուզուէր կորընչէր անգտանելի՝ ժամանակի անդրնդին մէջ։

11. — Ս. Գիրքը քոյր Հայոց ձեռքը։ — Նոյն գրքերու Գիրքն է՝ որ մեր յետմետրոպեան շրջանի բոլոր ուսումնասէր ու բարեպաշտ անձանց — ոչ լոկ իմաստնոց — աշխարհական դասէն՝ մտաւոր ծանօթութեան ու հոգեկան մխիթարութեան գլխաւոր աղբիւրը կը կազմէ։ Յիշենք քանի մ'օրինակներ՝ զատ ու յետ վերոյիշեալներուն։ Գագիկ Բ. Բագրատունի կը պարծէր Յունաց առջեւ՝ թէ «ամենայն կտակարանացն Աստուծոյ հնոյն և նորոյն հմուտ եմ¹»։ Մտ. Ուռհայեցին կը գովէ զԳագիկ արքայ կարուց, զԳր. Պահլաւունի (ու մատենագիր) և Բագրեւանդայ Ներսէս իշխանն՝ իբրեւ տեղեակ «հին և նոր կտակարանացն Աստուծոյ²»։ Հեթում Բ. արքայ «ի մանկական տիոց հետէ վարժեալ (էր.) կրթութեամբ յաստուածային օրինացն ընթերցումն³»։ Ասոր հօրաքոյրը Ֆիմի, պատերազմաց պատճառաւ զրկուած Սիւդոնի տիկնութենէն ու փախստական ի Հայս, կը խնդրէ իւր հօրեղբորէն՝ Յհ. եպիսկոպոսէն՝ ու կը ստանայ Սողոմոնի գրքերը (այժմ ի Ս. Ղազար), «որով, կ'ըսէ ընծայողը, յԱստուած և յաստուածայինսն խոկասցիս միշտ, և տրտմեալ սրտի քո սփոփանս սովաւ արասցես»։

3. Հայտմ. 516.



Հայկական Գրչագիրք

Մանրան. Ս. Ղազարու.

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՆՆՁԵՑԵԼՈՅ ՍՐԲՈՅ

18. — Աւետարան Թ. 141, ԺԲ-ԺԳ ղար

LA RESURRECTION DES SAINTS MORTS

Tetraevangile N. 141, XII-XIII Siècle

իւր բարեպաշտ հարազատը Լեւոն եւս աւետարան մը կը նուիրէ՝ «նմա ի մխիթարութիւն և ի փրկութիւն հոգւոյ¹»։ Այսպէս և ուրիշ շատ անձինք։

Հայ գրչագրաց մէջ ս. Գրոց թուական մեծ առաւելութիւնն իսկ կը վկայէ՝ թէ որքան բնդարձակ էր անոր գործածութիւնն յազգիս, եկեղեցեաց՝ ինչպէս ընտանեկան յարկերու մէջ, յայտնի իրենց յիշատակարաններէն իսկ։ Նոյնն իբրեւ պաշտպան կը տարուէր նա և պատերազմաց մէջ։ Երբ մեր իշխանը 450ին կոռուելու կ'երթային յԱպար աշխարհ, իրենց հետ առին «սուրբ կտակարանս» պաշտօնէից ձեռամբ²։

Բայց աւելի տարածուն էին Դաւթի սաղմոսները, որոնք իրենց ախորժական եղանակներով և աղօթական իմաստներով կը խօսէին բոլոր սրտերուն, և ամենուն բերանն էին։ Թարգմանութենէն քիչ վերջ իսկ չափահասը ու տղայը, կ'ըսէ Ղազար, ուսած էին զանոնք, և կը զուարճանային՝ «սաղմոսելով և կցորդս ասելով» հրապարակաց, փողոցաց ու տներու մէջ³։ Վարդանանք Աղուանից օգնութեան կ'երթային ու կը զանային՝ սաղմոս երգելով, ինչպէս կ'ըսէ Եղիշէ⁴։

Պատերազմէն փախստական հայրութեան՝ «սաղմոսը էին նոցա մրմունջը երգոց⁵»։ և այրակորոյս տիկնանց նոյնպէս «սաղմոսը էին մշտնջենաւորը մրմունջը ի բերանս նոցա⁶»։ Գուրգէն Արծրունի Արաբաց դէմ ճակատելու ժամանակ կ'աղօթէ՝ «ասելով զԴ. սաղմոսն և զԶԲ⁷»։ Լայնազոյն բաժին մ'ունէին սաղմոսները նա և հասարակաց աղօթից մէջ. Ղեւոնդեանք բանտի ներսն «անդադար սաղմոսիւր կային ի հանապազորդ պաշտամանն⁸»։ և Շնորհալին կ'ըսէ՝ թէ առանց հարիւր յիսուն

սաղմոսները պաշտելու նախ, ներելի չէ քահանային պատարագել⁹։ Ըստ Յովհաննէս Գառնեցւոյ՝ մինչ ուրիշ ազգեր «գրօք երգեն զսաղմոսն», ընդ հակառակն «Հայք ի բերան առեալ ասեն» քահանայը, ուսմիկներն ու մանկունք¹⁰։ Եւ իբրեւ զարմանալի բան մը՝ կը յիշուի որ Սարգիս վրդ. ոմն Ժ. զարուն՝ «ի մանկութենէ ըզգիրս սուրբս ի բերան առեալ» էր ամբողջութեամբ¹¹։

12. — Կտակարանք պաշտամանց մէջ։ — Աստուածաշունչ գրոց յարգն հաւասար չէր

1. Սխռւած՝ 145, 146. — 2. Եղիշէ՝ 19. — 3. Փրպ. 47. — 4. Եղիշ. 139, 147. — 5. Նոյն՝ 234. — 6. Նոյն՝ 386. — 7. Թ. Արծր. 164. — 8. Եղիշ.

273. — 9. Նմիթ. 1838, 156. — 10. Հայտմ. 460. — 11. Ասող. Գ, Թ.

իւր բոլոր մասանց մէջ: Նոր կտակարանն աւելի վեր կը նկատուէր քան զհինն՝ իբր անոր կատարելագոյն ձեւը, զոր շեշտեց նոյն ինքն Փրկիչն իւր վարդապետութեան մէջ: Իսկ նորին մէջ աւելի մեծարեալ էին Աւետարանը, իբրեւ ուղղակի Յիսուսի բեւաբանէն բղխած խօսքեր, քան թղթերը՝ որոց մէջ խօսողներն առաքեալք էին ի դիմաց Աստուծոյ: Այս համեմատութեամբ ալ խառնուած են անոնք ժամերգութեանց, պաշտամանց, ս. խորհրդոց մատակարարութեան և օրհնութեանց մէջ, հին կտակարանը՝ մասամբ, նորն՝ ամբողջութեամբ, վերջինս ժամերգութեանց ու պատարագի մէջ բաժնուած տարւոյն վրայ՝ ըստ տօնական յիշատակաց ու պարզ օրերուն: Հինն ընթերցուածոց հետ անպակաս են նորէն ալ, ուր նորին ընթերցուածք յաճախ կը գտնուին առանց հնին. իսկ Աւետարանն անհրաժեշտ է առաքելական թղթոց հետ, մինչ ինք միայնակ ալ կը տեսնուի շատ անգամ:

13. — Աւետարանի յատուկ դերը: — Շատ ընդարձակ էր ասոր գործածութիւնն իւր առաւելագոյն յարգին պատճառաւ՝ զոր ըսինք. և յիշեալներէն զատ՝ կը մտնէր բոլոր կենցաղական առիթներու մէջ, քրիստոնէացնելու և սրբացնելու համար հաւատացելոց կեանքը: Թուենք այդ առիթներն՝ որքան ծանօթ են ինձ:

Միջնադարեան սահմանադրութեան մը համեմատ՝ երբ եպիսկոպոս պիտի ընտրէին, ընտրող եպիսկոպոսական ժողովը կը հաւաքուէր, «և զնեն զԱւետարանն ի միջի իւրեանց»: Ապա կու գար ընծայելոյն թղթաբերը, և կ'ըսէր անոնց. «Քրիստոս է սուրբ Աւետարանդ ի միջի ձերում»։ անոր առջեւ ալ քննեցէք ու կատարեցէք ձեր ընտրութիւնը¹:

Եպիսկոպոսի ձեռնադրութեան մէջ եւս իւր բաժինն ունէր այն: Շնորհալին կը գրէ ի Կարս՝ թէ անոնց խաչատուր եպիսկոպոսը ձեռնադրեք է՝ ուրիշ սրբու-

թեանց հետ «և աստուածախօս Աւետարանաւ»²: Ն. Լամբրոնացին ալ կը վկայէ՝ թէ ձեռնադրելու պահուն «զԱւետարանն զնեն ի վերայ պարանոցին»³: Նոյն ձեւը կը տեսնենք նա և քահանայական ձեռնադրութեան առթիւ՝ 1248ի նկարի մը մէջ⁴, թէպէտ այս պարագայն յիշուած չէ այլուր, կամ ձեռնադրութեան գրոց մէջ:

Յետ վանահայր օրհնելու՝ կը նստեցընէին զայն յաթոռ, գիրկը տալով «խաչն և Աւետարան», և «ուխտն ողջունեն» կամ կը համբուրէին նոյն սրբութիւնքը, կ'ըսէ ԺԱ. դարու հնագոյն մաշտոցը⁵: Եւ կրօնաւորի օրհնութեան մէջ՝ թէ նուիրեալն յեկեղեցի կը մտնէր՝ «սուրբ Աւետարանաւ» և մոմերով ու խնկով:

Նոյն գրչագիրը կը ներկայացնէ զքահանայն քարոզելով ոտնալուայի առթիւ, «առեալ զսուրբ Աւետարանն ի գիրկան», և միւս ձեռքը կարկառելով: Արդարեւ Մլքէի Աւետարանին մէջ ալ, որ գրուած է 902ին⁶, աւետարանիչներէն մին ձախով բռնած է իւր մատենը, և աջը կը շարժէ քարոզութեան ձեւով:

Երբ վարդանանց օրով Պարսիկներն եկան Հայաստանէն ջնջելու քրիստոնէութիւնը, հայ կղերէն ոմանք «զԱւետարանն ի ձեռն առեալ»՝ կ'աղօթէին առ Աստուած. և այս կերպը կը նշանակէր միջնորդ բռնել ս. մատենը: Երբ վասակ սկսաւ իւր աւերիչ գործը, մեր եպիսկոպոսունք դարձեալ «զԱւետարանն ի ձեռն առեալ», սպարապետին բնակարանը վազեցին, աղաչելով «սուրբ Աւետարանաւ» առաջն առնուլ անոր չարեաց⁷: Վարդանայ դուստրը Շուշանիկ իւր տառապանաց մէջ բռնած էր փոքրիկ աւետարան մը, սեպհական իւր հաւուն Սահակայ, «և նովաւ ի ծածուկ զԱստուած աղաչէր»⁸: Յովհաննէս պոռքսիմոս 1007ին իւր գրել տուած աւետարանին մէջ նկարուած է, նոյն գիրքը բռնած ու ցոյց տալով՝ իբրեւ միջնորդ՝ Աստուածամօր, որ ի գահ բազ-

1. Մլտց. 1345 ամին ի Ս. Ղգր.: — 2. Նմկէի. 213. — 3. Մեկ. Պտր. 205. — 4. Պտմ. հայ տրգ.

348. — 5. Ի Ս. Ղգար.: — 6. Սնդ. — 7. Եղեշէ՝ 106, 118. — 8. Սոփեք, Թ, 27.

մած է Յիսուս մանկամբ¹: Եւ Ղգար վրդ. գրիչ 1201ի աւետարանին՝ կ'աղօթէ այսպէս. «Քս. Սծ. զքո սուրբ Աւետարանս առ քեզ միջնորդ և բարեխօս ունիմ»²: Այսպէս և ուրիշ շատեր:

Ի հնուց մինչեւ վերջ Աւետարանը վկայ բռնուած է երդմանց, և բազմաթիւ են օրինակները: Այսպէս Արշակ Բ հաւատարմութիւն երդուաւ Շապհոյ³. այսպէս Լեւոն վերջին ընդունեցաւ Հայոց հաւատարմութեան երդումը⁴. և այլք՝ զոր յիշած եմ այլուր⁵: Ուշագրաւ է Աւետարան ուխտի, որոյ վրայ վարդանանք երդուան պաշտպանել հայրենի կրօնը⁶. և կեղծաւորն վասակ իւր երդումն աւելի հաստատուն ցուցնելու համար՝ զայն գրեց, կընքից ու կապեց նոյն աւետարանին մէջ, կ'ըսէ, Եղիշէ, յարելով՝ թէ Հայք թէ և չհաւատացին անոր հաստատամտութեան, բայց չուզեցին պատժել զայն նախկին յանցանաց համար, «այլ սուրբ Աւետարանին թողին ի դատապարտութիւն»⁷: Այսպէս Մարի երէց ալ ըսած էր առ Շապուհ՝ երդմնազանց Արշակայ մասին՝ թէ «նոյն Աւետարանն ածէ զնա առ ոտս ձեր»⁸, ինչպէս եղաւ իսկ:

Վարդան վրդ. կ'աւանդէ՝ թէ Հայք «բանս յԱւետարանէն գրելով» կու տային հանգուցեալ քահանային ձեռքը⁹, հաստատուած նա և Գր. Տաթեւացիէն¹⁰: Անշուշտ կը նշանակէր Աւետարանի քարոզութեան պաշտօնը՝ զոր ունէր քահանայն:

Նոյն ս. մատենն իբրեւ պաշտպան կը տարուէր պատերազմաց մէջ, ինչպէս երբեմն բոլոր կտակարանը¹¹: Բուզայի դէմ Գուրգէն Արծրունւոյ ճակատամարտին մէջ քահանայը ունէին «բարձեալ ի վեր զԱւետարանն սուրբ» իսաչին հետ, և մեծ յաղթանակ մը շահեցան¹²:

Հինաւուրց սովորութիւն էր՝ Աւետա-

րանէն կտորներ օրինակել և իրենց վրայ կրել իբրեւ պահպանակ ի չարէ, ինչպէս կը վկայեն Ոսկերերան և այլ հին Հարք¹³: Նոյնը վաղուց մեր քով ալ լինելու է, որով զեռ կը մնար Յհ. Եղնկացւոյ ժամանակ, որ կ'ըսէ՝ թէ «այժմ բազում կանայք աւետարանակ կապեն զպարանոցաց մանկանցն»¹⁴: Բախտիար պատրիկ 1073 թուականին մանր գրով ընդօրինակել կու տայ Յոհաննու աւետարանը, յարգելու համար մօրը պատուէրը, որ կ'ուզէր որ զաւակը «հանապազ պահիցէ ի գրապանս զգեստուն» այն մատենիկը, «առ ի հանդարտութիւն սրտի նորա, և ի պահպանութիւն կարեւոր կենաց նորին»¹⁵:


Մեծօփայ ուխտին առաջնորդ Յովհաննէս վարդապետի մասին (ԺԴ դարուն) կը կարդանք՝ թէ ցաւեր ու հիւանդութիւններ կը փարատէր՝ «Աւետարանին ընթերցմամբ» ու ձեռք զնելով, ոչ միայն հաւատացելոց՝ այլ և անհաւատից¹⁶: Նոյն նպատակաւ յօրինուեցաւ ու մտաւ Մաշտոցին մէջ հիւանդաց բժշկութեան կանոնն ալ, զոր ցայսօր կը պաշտենք:

14. — Մեծարանք Աւետարանի: — Մեր բարեպաշտ նախնիք զանազան կերպերով ցոյց կու տային իրենց յարգանքն աստուծային մատենիս: Ամենէն յաճախեալ ձեւն էր համբոյր և երկրպագութիւն: Վարդանանք յետ ուխտին պաշտպանել զեկեղեցին, «ողջունեցան յԱւետարանէն և յեպիսկոպոսացն»¹⁷, համբուրիւ: Սպարապետն երբ Աղուանից օգնութեան պիտի երթար, նախ մտաւ Աստուծոյ տունը. և «առեալ զսուրբ Աւետարանն» ու խաչը, «ողջունէր, զնելով անյագ ի վերայ բաց աչացն և ճակատու». նոյնպէս ըրին ընկերներն ալ¹⁸: Ըստ Ժամատեղաց խրատուց Շնորհալոյն՝ յետ իւղաբերից աւետարանին ընթերցման՝ դասին զխաւորը կը

1. Պտմ. հայ տրգ. 173. — 2. Հեղ. ամս. 1, 246. — 3. Փաւ. Գ, 34, 34. — 4. Գարդէ, ՂԹ. — 5. Երդմունք, 52-53. — 6. Փրպ. 167. — 7. Եղեշէ՝ 121-22. — 8. Փաւ. Գ, 34. — 9. Վ.ս. Կիրարեւ. զրչ. Ս. Ղգր. — 10. Քրգ. 249. — 11. Աստ.

329. — 12. Թով. Արծ. 165. — 13. Հմմտ. Երդմունք. 221. — 14. Մեկ. Մտր. ԻԳ, 5. — 15. Հ.ք. յշտ. — 16. Թով. մեծօփ. Պտմ. — 17. Եղեշ. 119. — 18. Փրպ. 187.

մատենար ու կը համբուրէր ս. մատենանը. որուն կը վկայէ և Գր. Տաթևացին՝ թէ «երկիր պագանեմք և համբուրեմք» զայն¹: Այսպէս նա եւ աւագ հինգշաբթի յետ ար-



Հայկական Գրչագիրք

Մանգրն. Ս. Ղազարու.

«ՅԱՐՈՒԹԻՒՆ ՏԵՍՈՆ»

Գերեզման ունայն, հրեշտակն և կանայք իւղարերը և (ստորեւ) պահապանքն զարհուրեալը:

19. — Աւետարան Թ. 141, ԺԲ-ԺԳ Դար

LA RESURRECTION DE N. S.
Tétravangile N. 141, XII-XIII Siècle

ձակման ապաշխարողաց «համբուրեն զԱւետարանն» որ զրուած էր բեմին առջեւ, կ'ըսեն 1216ի մաշտոցն ու տօնացոյցը²: Նմանապէս աւագ ուրբաթի առաւօտուն Աւետարանը միւս սրբութեանց հետ կը զրուէր

սեղանին վրայ, «և երկրպագեն ամենայն ժողովուրդն»³: Այս յարգանաց իմաստը կը մեկնէ Վրթանէս քերթող, գրելով՝ թէ «մեք յորժամ երկիր պագանեմք» Աւետարանին, ոչ նիւթին է, «այլ բանի Փրկչին՝ որ ի մագաղաթին գրեալ է»⁴: Եւ Զաքարիա կաթողիկոս՝ թէ «ի համբուրել մեզ... զԱւետարանն՝ զՓրկչն ասեմ համբուրել»⁵:

Յհ. Ոսկերեան կը վկայէ թէ Աւետարանը բռնելէ յառաջ սովոր էին լուանալ իրենց ձեռքերը⁶: Նոյն գաղափարը կար ու կը մնայ և մեր քով. Ստեփանոս վրդ. գրիչ 1171ի Աւետարանին՝ կը խնդրէ՝ որ «մաքրուեալ և զգուշութեամբ հպիք յայս ամենափրկիչ սուրբ աւետարանս». և ինքն ալ «ծոմապահութեամբ և խնդրուածովք» գրեր էր զայն՝ «վասն թշկուծեան ամենեցուն»⁷:

Մեծարանաց նշաններէն մին էր նա և բռնել նոյն ս. մատենանը դաստակով մը, որ բաւական հին սովորութիւն է: Մըքի աւետարանին նկարուց մէջ (902էն) երկու աւետարանիչը իրենց մատենաները բնած են մի մի ասղնագործ ընտիր դաստակով. մին՝ ձախով ու փակ, և միւսն երկու ձեռք ու բաց՝ ընթերցման ձեւի տակ, ինչպէս կ'ընենք ցարդ:

Աւելին կայ. Շնորհալին կ'արգելու Աւետարան կարդալ եկեղեցւոյ մէջ՝ «առանց սուրբ ծածկութի պատարազամատուցին զգենլոյ»⁸, որ է պատարազի նափորտը: Նոյն հայրապետին Ժամատեղաց խրատը կը պատուիրէ նա և կարդալ զայն «երկու դապտեբօր և բուրուառով»: Տաթևացիէն եւս կը յիշուին այս առթիւ «ձայն բուրուառին» և «ղամպարն վառեալ»⁹, որոնք ուրեմն նոր չեն մեր քով:

15. — Պձևուսմ Աւետարանի: — Ա.

Ա, 28: — 7. Հէք. յշտ: — 8. Նմկ. 144: — 9. Գիրք հրեմ. Թ, ԽԲ:

1. Գիրք հրեմ. Թ, ԽԲ: — 2. Ի Ս. Ղազար. — 3. Աշտրեցոյց. 1284ի՝ Ի Ս. Ղազար: — 4. Յղգս. պատկերամատից: — 5. Ի ս. եկեղեցի: — 6. Մեկ. Մար.

րուեստն ալ իւր բաժինը բերած է՝ յատկապէս զարգարելու համար Աւետարանը քան միւս աստուածաշունչ մատենաները: Սկսեալ մեր գրչագրաց երիցագոյն օրի-



Հայկական Գրչագիրք

Մանգրն. Ս. Ղազարու.

ՎԵՐՋԻՆ ԴՍՏԱՍՏԱՆ

Արդարք ընդ աջմէ Փրկչին, մեղաւորք ի ձախմէ, և հոյր զեկնին ի ներքոյ:

20. — Աւետարան Թ. 141 ԺԲ-ԺԳ Դար

LE DERNIER JUGEMENT
Tétravangile N. 141 de XII-XIII Siècle

նակներէն, ընդհանրապէս իրենց մէջ անպակաս ունին՝ աւելի կամ նուազ չափով՝ զարգարուն խորաններ, աւետարանչաց կենդանագրերը, մերթ նա և ստացողացը, տերունական յիշատակաց պատկերներ, լուսանցազարդեր ու ճարտարաձեւ գլխաւորեր: Ատոնց մէջ է՝ որ կը փայլի հայ նկարչութիւնն իւր ամբողջ ճոխութեամբ, և որուն սքանչելի օրինակներ ալ կան,

ինչպէս Լամբրոնի տեարց համար գրուածն 1193 թուին, այժմ ի Ս. Ղազար, և ուրիշներ: Նկարչութիւնն աւելի ուշ պիտի մտնէ նա և հին կոտակարանի մէջ, այլ առանց հաւասար մրցակից մը դարձնելու զայն Աւետարանին:

Բայց արուեստն Յիսուսի խօսքերը ներքսապէս պնդելով չբաւականացաւ, այլ արտաքուստ եւս շքեղազարդեց զայն թանկագոյն կազմերով: Վրթանէս քերթող Զ դարէն իսկ կը գրէ՝ թէ «զտիպս Աւետարանին տեսանեմք նկարեալս ոչ միայն յոսկոյ և յարձաթոյ, այլ և յոսկերաց փղաց և կարմիր մորթով կազմեալ»¹: Էջմիածնի օրինակն 989էն՝ արդարեւ ունի ցարդ փղոսկրեայ կազմ մը, այլեւայլ սրբազան քանդակներով ծածկուած: Գր. Տղայ կաթողիկոսը Շնորհալոյն իրեն նուիրած Աւետարանը վերստին նորոգել կու տայ «գեղեցիկ մետաքսիւր և ակամբը պատուականօք, ընդելուզեալ մարգարտոյ մեծագնոյ»²: Սմբատ կը յիշէ նա և նոյն հայրապետին «զոսկիակազմ տուփ Աւետարանին... որ էր աւամբ և մարգարտով»³: Կային դարձեալ կոստանդին կաթողիկոսի գրել տուած երկու օրինակներ՝ «կազմեալ ոսկով և արծաթով»⁴: Այսպէս և ուրիշ շատեր, յիշատակուած և կամ գծուած նկարներու մէջ:

Այսքան և այսպիսի ինամով, երկուգածութեամբ ու սրբութեամբ պահուեր և գործածուեր է այն Գիրքը՝ որ հայ ազգին փրկութեան խարխիւն հանդիսացաւ:

Տեա՛րք, պիտի կնքեմ բանախօսութիւնս դիտողութեամբ մը: Անցեալ պարծելի յիշատակներ տօնախմբել՝ յատուկ է գոյութեամբ ու քաղաքակրթութեամբ հին ազգերու, որոնք իրենց պատմութեան իջեւրուն մէջ արձանագրած ունին փառաւոր գործեր. և որոնք նորոգելով այդ յիշա-

1. Յղգ. պտկրմրաց: — 2. Հէք. յշտ: — 3. Տրգր.

115. — 4. Ազգգր. հեղ. ԻԳ, 63:

տակները, կը ցուցնեն ապրելու իրենց հաստատուն կամքը: Ազգայնամոլութիւնը չէ, — ուստի կը խորշիմ ես, — այլ խոր համոզում մը, որ կը ստիպէ զիս պնդել՝ թէ այդ ազգերէն մին է Հայն ալ: Գեղեցիկ են այս յորելեանները, այս յիշատակութիւնը հին փառքերու. բայց չեն բաւեր ապահովելու մեր ներկայ և ապագայ փառքերն ալ, եթէ թարմ չպահուին այն արմատներն՝ ուստի բուսան անցածները, եթէ ուղիղ չընթացուի այն ճանապարհներէն՝ որ կը տանին այդ պարծանաց:

Մեր նախնեաց անվկանդ հաւատքը, ջերմ բարեպաշտութիւնն և աստուածատուր պատգամաց պատկառանքն եղան՝ որ փրկեցին մեր ազգը կորնչելէ. տեսանք զայս: Առանց Աւետարանին չկայ և ոչ ճշմարիտ քաղաքակրթութիւն. և այլակրօն ազգերն անգամ զարգանալու համար՝ կը ջանան հետեւիլ այսօր քրիստոնէական քաղաքակրթութեան՝ որ արեւմտեան ալ կը կոչուի, ապտակելով քրիստոնեայ ազատասիրտները: Դարձեալ՝ ամէն պետութիւնը և ազգեր ունեցան իրենց մեծութիւնը, ապա անկումն ու մահը: Եւ երբ ատուր պատճառն որոնենք, կը գտնենք ան-

վրէպ անոնց բարոյական — արդի լեզուով՝ աւետարանական բարոյականի — քայքայման մէջ: Իսկ քայքայումը կը սկսի անհատական կենաց մէջ, և կ'անցնի ազգերուն՝ որ նոյն անհատներէն կազմուած են:

Մեր ազգին մէկ մասին ընթացքին մէջ եւս անձկութեամբ կը նշմարեմ այսօր դէպ ի նախամիսրոպեան շրջանի քրիստոնէութիւնը վերադարձի մ'երեւոյթներ. այն անուանական քրիստոնէութեան, որ մեր ցեղին յուղարկաւորութիւնը պիտի պատրաստէր՝ եթէ չբարեփոխուէր: Ազգասիրութիւն, շինարարութիւն, հայ եկեղեցի՝ ծէս կամ լեզու, գեղեցիկ՝ բայց տկար և անբաւական նեցուկներ են մեր ազգապահութեան, եթէ պակսի Աւետարանի «հուրն» կենդանի, որ կը մաքրէ, կը զօրացնէ և կը պահէ: Կը մաղթեմ՝ որ այս յիշատակաց արժանի յորելեանը՝ որ կը փակուի, իսկան մը լինի մեզ՝ վերաբարձելու մեր հարց շնչած ու երգած այդ հոգեկան հուրը մեր մէջ, և մեր սրտերուն և ընկերական կենաց մէջ ամրապնդէ Աստուծոյ թագաւորութիւնը, ի ստոյգ բարգաւաճութիւն և ի յաւերժութիւն մեր սիրելի և պանծալի Ազգին:

Հ. Վ. ՀԱՅՈՒՆԻ



ՆՄՈՅԾ ՄԸ ՅՈՎ. ՀԱՆՆՈՒ ԱԻԵՏԱՐԱՆԻՆ ՀԱՅ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ ԲՆԱԳՐԷՆ ՈՒՆԵՑԱԾ ՏԱՐԵՐԱԿՆԵՐԷՆ



ԱՐԳԵԱՅԻՆ ոչ մէկ գործ, մանաւանդ երբ ընդարձակ և բազմակողմանի է, չի կրնար բացարձակ կատարելութեամբ օժտուած ըլլալ:

Հետեւաբար «Թարգմանութեանց թագուհին» երկնող և արդիւնաւորող մեր պաշտելի Նախնեաց հսկայ գործը իր իսկական արժանիքն ու փայլը չի կորսնցրեր անշուշտ՝ եթէ մեծամեծ առաւելութեանց հետ մատնանիշ ընենք նաեւ անոր մէջ սրբագրելի կէտեր. մանաւանդ թէ նոյն ինքն մեր Թարգմանիչներու նպատակին համաձայն և անոնց գործին կատարելութեան օժանդակող աշխատութիւն մըն է երեւան հանելը այն զանազանութիւնները՝ որոնցմէ ոմանք նուազ, ուրիշներ աւելի կարեւորութիւն մ'ունին բնագրին հարազատ իմաստին մէջ թափանցելու համար:

Ու է թարգմանութեան մը հիմնական և անհրաժեշտ յատկութիւնը պէտք է ըլլայ ճշգրիտ և առարկայական ներկայացումը բնագրին իմաստներուն. բայց Ս. Գրքի թարգմանութեան մէջ բաւական չի համարուիր և չի գոհացներ միայն զաղափարի ճշգրտութիւնը, այլ կը պահանջուի աւելի մերձաւոր և հաւատարիմ հետեւողութիւն մը թէ՛ բացատրութեանց և թէ՛ նոյն իսկ բառերու նշանակութեանց մէջ: Չեմ ըսեր սակայն ստրկական վերածում մը սկզբնազիր օրինակին, ինչպէս լաւ կ'ըսէ Եւսեբիոս Եմեսացին ալ¹, անտեսելով թարգմանող լեզուին բանաւոր կամ արդար ազատութիւնը և յատկաբանութիւնները, ինչ որ նպատակէ դուրս, անարժէք և պախարակելի գործ մը պիտի ըլլար: Աստուածաշունչի թարգմանութեան նկատմամբ եղած այս յատուկ խստապա-

հանջութեան պատճառը կը հիմնուի այդ գերազոյն գրքին սրբազնութեան և հեղինակութեան վրայ. որովհետեւ անոր ոչ միայն իմաստը այլ նաեւ իւրաքանչիւր նախադասութիւնները և զանոնք կազմող բառերն աստուածային են՝ և հետեւաբար գերմարդկային հեղինակութիւն մ'ունին Գրիստոսի Եկեղեցւոյն համար:

Մեր սուրբ և աստուածարեալ Նախնիք այս պահանջներուն կատարեալ և արդիւններէս շատ աւելի լուրջ գիտակցութեամբ և ըմբռնումով ձեռք զարկեր են բովանդակ Աստուածաշունչի և անոր իւրաքանչիւր մասերուն թարգմանութեան. ապացոյց՝ անոնց տաժանելի ճանապարհորդութիւնները օտար երկիրներ, ուսանելու, հմտանալու, որոնելու և գտնելու վախճանով Ս. Գրքի լաւագոյն և հաւատարմագոյն յոյն ձեռագիրներ, փոխանակելու համար յետոյ զայն ասորւոյն վրայէն նախապէս կատարուած նուազ վստահելի թարգմանութեան հետ: Մարդ կը զմայլի Ս. Սահակի և Ս. Մեսրոպի ծրագրին անթերի իրագործման համար ձեռք առած նախազգուշութիւններուն, աշակերտներու ընտրութեան և հետաւոր ու մերձաւոր պատրաստութիւններուն վրայ. անոնց գործի ընթացքին տուած առաջնորդութեան և ըրած խղճամիտ պրպտումներուն, ողջամիտ դատաստաններուն և անորակելի ջանքերուն վրայ: Թէպէտ ուրիշ մանրամասնութիւններ, — թէ ի՞նչ ոճով արդեօք և ո՞ր ձեռագիրներու հետեւողութեամբ կամ ընտրանօք, ո՞ր թարգմանիչներու ձեռքով և նման պարագաներ —, անստուգութեամբ

1. Տես «Թարգմանչապ»ի ներկայ թուին մէջ, էջ 347.